

Սարգիս Սահակյանը հանդիպեց Ջամշու, Լեոնապար, Ծիլքար, Գեղարոտ համայնքների բնակիչների հետ

Սեպտեմբերի 24-ին մարզպետ Սարգիս Սահակյանը այցելեց Ջամշու, Լեոնապար, Ծիլքար, Գեղարոտ համայնքներ եւ հանդիպում ունեցավ բնակիչների հետ: Արագածի տարածաշրջանի այս համայնքները, որոնք բարձր լեռնայինի կարգավիճակ ունեն, ընդհանուր առմամբ, միանման խնդիրներ բարձրացրին: Դրանք վերաբերում էին խմելաջրի մատակարարմանը, համայնքային ճանապարհների վերանորոգմանը, գազիֆիկացմանը եւ համընդհանուր հետաքրքրություն ներկայացնող այլ հարցերի:

Մարզպետի հետ քննարկվեցին կառավարության կողմից սերմացուի, դիզելային վառելիքի, պարարտանյութի հատկացման գործընթացի հետ կապված հարցեր: Մարզպետը տեղեկացրեց, որ ցանկացողները կարող են դրանք ձեռք բերել այն քանակությամբ, որքան իրենց հարկավոր է: Այդ աշխատանքները կազմակերպվում են մարզպետարանի եւ համայնքների ղեկավարների հետ համագործակցված: Այնպես որ, գյուղացիները իրենց պահանջարկի մասին կարող են ներկայացնել:

Սարգիս Սահակյանը գյուղացիներին հորդորեց իրենց հուզող առողջապահական, սոցիալական, տնտեսական եւ անձնական այլ հարցերի մասին դիմել իրեն: Կառավարությունը ունի հնարավորություններ՝ կարիքավորներին նշված հարցերում աջակցելու համար:

Մի խումբ բնակիչների հատկացվեցին դրամական, բժշկական աջակցություն:

Բոլոր համայնքներում էլ բնակիչները շնորհակալություն հայտնեցին մարզպետին՝ այցելության, ինչպես նաեւ համայնքներում առկա հիմնախնդիրների լուծման հարցում իրենց աջակից լինելու համար: Եզդիաբնակ Ջամշու գյուղում առանձնակի գոհունակություն հայտնեցին դպրոցին ցուցաբերած ուշադրության համար: Սարգիս Սահակյանի նախաձեռնությամբ դպրոցը վերանորոգվել է, հատկացվել են նոր գույք, համակարգիչային տեխնիկա: Այդ ամենի շնորհիվ 36 աշակերտ ունեցող դպրոցը հաջողությամբ է սկսել նոր ուսումնական տարին: Հանդիպման ընթացքում մարզպետը այցելեց դպրոց, տեղում ծանոթացավ պայմաններին եւ խոստացավ առաջիկայում եւս աջակից լինել նրանց: